ԿՈՆՎԵՆՑԻԱ

Խաղաղ նպատակներով տիեզերական տարածության հետազոտման եւ օգտագործման ոլորտում համագործակցության մասին Անկախ Պետությունների Համագործակցության

Պաշտոնապես
հաստատված
տեքստ

ԿՈՆՎԵՆՑԻԱ
«Խաղաղ նպատակներով տիեզերական տարածության հետազոտման եւ օգտագործման ոլորտում համագործակցության մասին» Անկախ Պետությունների Համագործակցության

Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունները, այսուհետ՝ Կողմեր,

հաշվի առնելով տիեզերական գիտության, տեխնիկայի եւ տիեզերական տեխնոլոգիաների մեծ նշանակությունը ԱՊՀ մասնակից պետությունների սոցիալ-տնտեսական եւ գիտատեխնիկական զարգացման համար,

ընդունելով խաղաղ նպատակներով տիեզերական տարածության հետագա հետազոտման եւ օգտագործման ընդհանուր շահագրգռվածությունը,

ձգտելով զարգացնել խաղաղ նպատակներով տիեզերական տարածության հետազոտման եւ օգտագործման, ինչպես նաեւ տիեզերական տեխնիկայի եւ տիեզերական տեխնոլոգիաների կիրառման ոլորտում համագործակցությունը՝ ի շահ իրենց պետությունների ժողովուրդների,

ընդունելով գիտատեխնիկական եւ արտադրական կոոպերացիայի վրա հիմնված՝ տիեզերական գործունեությունում նպատակաուղղված միջազգային համագործակցության գործնական կարեւորությունը եւ դրանից բխող հնարավոր փոխադարձ օգուտները,

ընդունելով «Տիեզերական տարածության, այդ թվում՝ Լուսնի եւ այլ երկնային մարմինների հետազոտման ու օգտագործման ոլորտում պետությունների գործունեությունը կարգավորող սկզբունքների մասին» 1967 թվականի հունվարի 27-ի պայմանագրի եւ «Տիեզերական օբյեկտների կողմից հասցված վնասի համար միջազգային պատասխանատվության մասին» 1972 թվականի մարտի 29-ի կոնվենցիայի դրույթների կարեւորությունը,

համաձայնեցին հետեւյալի մասին.

Հոդված 1

Սույն կոնվենցիայի նպատակներով գործածվում են հետեւյալ եզրույթները՝

Երկրի հեռավար զոնդավորում տիեզերքից՝ բնության բնական չափորոշիչների եւ երեւույթների, բնական ռեսուրսների, շրջակա միջավայրի, ինչպես նաեւ մարդածին գործոնների եւ գոյացությունների տեղադիրքը, բնույթի

նկարագրությունը եւ ժամանակային փոփոխականությունը որոշելու նպատակով էլեկտրամագնիսական ալիքների տարբեր դիապազոններում ցամաքի, օվկիանոսի ու մթնոլորտի տարրերի իրենց սեփական եւ անդրադարձված ճառագայթումը տիեզերքից դիտարկելու եւ չափագրելու միջոցով Երկրի մակերեւույթի վերաբերյալ տեղեկատվության ստացման գործընթաց.

կոորդինատային-ժամանակային եւ նավիգացիոն ապահովում՝ սպառողի կողմից իր համար անհրաժեշտ օբյեկտների եւ գործընթացների տարածաժամանակային վիճակների եւ հարաբերությունների մասին բոլոր այն տվյալներն ստանալու նպատակով կատարվող գործողություններ, որոնք օգտագործվում կամ հաշվի են առնվում իր կողմից՝ տարածության մեջ եւ ժամանակում սահմանված խնդիրները լուծելու կամ նպատակներին հասնելու համար.

տիեզերական գործունեություն՝ տիեզերական տարածության, այդ թվում՝ Լուսնի եւ այլ երկնային մարմինների հետազոտման ու օգտագործման աշխատանքների անմիջական կատարման հետ կապված ցանկացած գործունեություն.

տիեզերական ենթակառուցվածք՝ տիեզերական գործունեության ապահովման համար նախատեսված օբյեկտների համալիր.

տիեզերական տեխնիկա՝ նախապատրաստման օբյեկտների (մեկնարկային համալիրներ, օդային նավեր-կրիչներ), դուրսբերման-վայրէջքի միջոցների (հրթիռ-կրիչներ, թափառքային բլոկներ, դուրսբերման միջոցների եւ տիեզերական ապարատների բաղադրիչ մասերի վայրէջքի համակարգեր) եւ տիեզերական ապարատների շահագործման համակարգերի ամբողջություն.

տիեզերական տեխնոլոգիաներ՝ տիեզերական տեխնիկայի ստեղծման եւ համապատասխան ծառայությունների մատուցման համար օգտագործվող մեթոդների, գործընթացների եւ նյութերի ամբողջություն.

գիտատեխնիկական ներուժ՝ հասարակության առջեւ դրված գիտատեխնիկական զարգացման խնդիրների լուծման համար նախատեսված կադրային եւ կազմակերպչական, նյութատեխնիկական, ֆինանսական եւ տեղեկատվական ռեսուրսների ամբողջություն.

կիրառական տիեզերական հետազոտություններ՝ գործնական նպատակներին հասնելու եւ կոնկրետ խնդիրները լուծելու համար տիեզերական ոլորտում նոր գիտելիքների ձեռքբերմանն ու կիրառմանն ուղղված հետազոտություններ.

համատեղ գործունեություն՝ սույն կոնվենցիայի շրջանակներում Կողմերի

գործունեություն, որը կապված է խաղաղ նպատակներով տիեզերական տարածության հետազոտման եւ օգտագործման, տիեզերական տեխնիկայի եւ տիեզերական տեխնոլոգիաների կիրառման հետ,

հենքային տիեզերական հետազոտություններ՝ տիեզերական տարածության մասին նոր գիտելիքների ձեռքբերմանն ուղղված փորձարարական եւ տեսական գործունեություն:

Հոդված 2

Խաղաղ նպատակներով տիեզերական տարածության հետազոտման եւ օգտագործման ոլորտում Կողմերի համագործակցությունն իրականացվում է միջպետական, միջկառավարական պայմանագրերի եւ միջգերատեսչական բնույթի միջազգային պայմանագրերի շրջանակներում, որոնք կնքվել են միջազգային իրավունքի համընդհանուր սկզբունքներին ու նորմերին համապատասխան եւ պահպանելով Կողմերից յուրաքանչյուրի օրենսդրությունը:

Կոնվենցիայի շրջանակներում համատեղ գործունեության իրականացման կարգը կարգավորվում է ԱՊՀ մասնակից պետությունների առանձին միջկառավարական համաձայնագրով, որում դիտարկվում են նաեւ տեխնոլոգիաների պահպանության, մտավոր սեփականության իրավունքների, տեղեկատվության փոխանակման, արտահանման հսկողության, մաքսային կարգավորման, Կողմերի պատասխանատվության, Տիեզերքի գծով միջպետական խորհրդի գործունեության վերաբերյալ հարցերը:

Հոդված 3

Խաղաղ նպատակներով տիեզերական տարածության հետազոտման եւ օգտագործման ոլորտում համագործակցության նպատակներն են՝

տիեզերական տեխնիկայի եւ տիեզերական տեխնոլոգիաների, տիեզերական գործունեության արդյունքների արդյունավետ օգտագործման միջոցով Կողմերի սոցիալ-տնտեսական զարգացմանն աջակցությունը,

տիեզերական գործունեության ոլորտում համատեղ նախագծեր իրականացնելիս ԱՊՀ մասնակից պետությունների ֆինանսական, գիտատեխնիկական, արտադրական եւ մտավոր ռեսուրսների միավորման արդյունքում տնտեսական էֆեկտի եւ որակական առավելությունների ստացումը,

Կողմերի գիտատեխնիկական ներուժի եւ տիեզերական ենթակառուցվածքի

զարգացումը,

Երկրի եւ տիեզերական տարածության մասին գիտելիքների կատարելագործումն ու կուտակումը:

Հոդված 4

Խաղաղ նպատակներով տիեզերական տարածության հետազոտման եւ օգտագործման ոլորտում համագործակցությունը հիմնված է հետեւյալ հիմնական սկզբունքների վրա՝

Կողմերի իրավահավասարություն եւ փոխադարձ շահ,

գիտության, տեխնիկայի եւ տիեզերական տեխնոլոգիաների տարբեր ոլորտներում գիտական եւ տեխնիկական տեղեկատվության, փորձարարական տվյալների, փորձարարակոնստրուկտորական աշխատանքների արդյունքների եւ նյութերի փոխադարձ փոխանակում,

խաղաղ նպատակներով տիեզերական տարածության հետազոտման եւ օգտագործման ոլորտում ուժերի, միջոցների եւ գիտատեխնիկական ներուժի միավորում,

տիեզերական տեխնոլոգիաների եւ համապատասխան ծառայությունների միջազգային շուկայում գործընկերության տարբեր ձեւերի եւ համատեղ գործունեության զարգացում:

Հոդված 5

Կողմերն նպաստում են համագործակցության զարգացմանը հետեւյալ ուղղություններով՝

հենքային եւ կիրառական տիեզերական հետազոտություններ՝ ներառյալ աստրոֆիզիկական հետազոտությունները, մոլորակների եւ աստերոիդ-գիսաստղային վտանգի ուսումնասիրությունը,

Երկրի հեռավար զոնդավորում տիեզերքից,

կոորդինատային-ժամանակային եւ նավիգացիոն ապահովում,

տիեզերական աղբի օգտահանման խնդրի լուծում,

աստերոիդ-գիսաստղային սպառնալիքի կանխարգելում,

տիեզերական գործունեություն իրականացնելիս շրջակա միջավայրի էկոլոգիական անվտանգության եւ պահպանության ապահովում,

տիեզերական տեխնիկայի եւ տիեզերական ենթակառուցվածքի հետ կապված գիտատեխնիկական, փորձարարակոնստրուկտորական, փորձարարատեխնոլոգիական եւ այլ աշխատանքներ,

օդանավավարվող տիեզերական թռիչքներ,

համապատասխան ծառայությունների տրամադրում եւ օգտագործում,

տիեզերական ոլորտի համար կադրերի նախապատրաստում եւ վերապատրաստում,

տիեզերական գործունեության ոլորտում Կողմերի ազգային նորմատիվ իրավական եւ տեխնիկական փաստաթղթերի ներդաշնակեցում:

Համագործակցության այլ ուղղություններ Կողմերի կողմից կարող են լրացուցիչ համաձայնեցվել:

Կողմերը նպաստում են խաղաղ նպատակներով տիեզերական տարածության հետազոտման եւ օգտագործման գիտատեխնիկական եւ միջազգային-իրավական խնդիրների լուծմանն ուղղված միջազգային ջանքերին եւ այդ ոլորտում համագործակցում են միմյանց հետ:

Հոդված 6

Խաղաղ նպատակներով տիեզերական տարածության հետազոտման եւ օգտագործման համատեղ գործունեությունն իրականացվում է Կողմերի կողմից՝ միջպետական նախագծերի եւ ծրագրերի հիման վրա:

Հոդված 7

Կողմերի համատեղ գործունեության համակարգումն իրականացվում է խաղաղ նպատակներով տիեզերական տարածության հետազոտման եւ օգտագործման ոլորտում ԱՊՀ ճյուղային համագործակցության մարմին հանդիսացող՝ Տիեզերքի գծով միջպետական խորհրդի կողմից:

Հոդված 8

Միջպետական նախագծերի եւ ծրագրերի ֆինանսավորումն իրականացվում է

շահագրգիռ Կողմերի կողմից՝ ազգային բյուջեներով նախատեսված միջոցների եւ արտաբյուջետային աղբյուրների հաշվին:

Հոդված 9

Կողմերի միջեւ վեճերը, որոնք կարող են ծագել սույն կոնվենցիայի մեկնաբանման եւ կիրառման ժամանակ, լուծվում են խորհրդակցություններ եւ բանակցություններ անցկացնելու միջոցով:

Հոդված 10

Կողմերի համաձայնությամբ՝ սույն կոնվենցիայում կարող են կատարվել դրա անբաժանելի մասը հանդիսացող փոփոխություններ, որոնք ձեւակերպվում են համապատասխան արձանագրությամբ:

Հոդված 11

Սույն կոնվենցիան ուժի մեջ է մտնում այն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը կոնվենցիան ստորագրած Կողմերի կողմից կատարվելու մասին երրորդ գրավոր ծանուցումն ավանդապահի կողմից ստանալու ամսաթվից 30 օրը լրանալուց հետո:

Ներպետական ընթացակարգերն ավելի ուշ կատարած Կողմերի համար սույն կոնվենցիան ուժի մեջ է մտնում համապատասխան փաստաթղթերն ավանդապահի կողմից ստանալու ամսաթվից 30 օրը լրանալուց հետո:

Հոդված 12

Սույն կոնվենցիան բաց է ԱՊՀ ցանկացած մասնակից պետության կողմից միանալու համար՝ միանալու մասին փաստաթղթերն ավանդապահին փոխանցելու միջոցով:

Միացող պետության համար կոնվենցիան ուժի մեջ է մտնում՝

ա) միանալու մասին փաստաթուղթն ավանդապահի կողմից ստանալու օրվանից 30 օրը լրանալուց հետո՝ պայմանով, որ միանալու մասին փաստաթղթերն ավանդապահին հանձնելու պահի դրությամբ կոնվենցիան ուժի մեջ է մտել,

բ) կոնվենցիան ուժի մեջ մտնելու օրվանից՝ պայմանով, որ միանալու մասին

փաստաթղթերն ավանդապահին հանձնելու պահի դրությամբ կոնվենցիան ուժի մեջ չի մտել:

Հոդված 13

Այն Կողմերի միջեւ հարաբերություններում, որոնց համար սույն կոնվենցիան ուժի մեջ է մտել սույն կոնվենցիայի 11-րդ եւ 12-րդ հոդվածներով սահմանված կարգով, դադարում են գործել.

«Տիեզերական տարածության հետազոտման եւ օգտագործման համատեղ գործունեության մասին» 1991 թվականի դեկտեմբերի 30-ի համաձայնագիրը,

«Տիեզերական ծրագրերի կատարման շահերից ելնելով՝ տիեզերական ենթակառուցվածքի օբյեկտների պահպանման եւ օգտագործման կարգի մասին» 1992 թվականի մայիսի 15-ի համաձայնագիրը:

Հոդված 14

Սույն կոնվենցիան կնքվում է անորոշ ժամկետով:

Յուրաքանչյուր Կողմ իրավունք ունի դուրս գալու սույն կոնվենցիայից՝ իր այդ մտադրության մասին գրավոր ծանուցում ուղարկելով ավանդապահին ոչ ուշ, քան դուրս գալու ամսաթվից 12 ամիս առաջ:

Կատարված է Դուշանբե քաղաքում, 2018 թվականի սեպտեմբերի 28-ին, մեկ բնօրինակից, ռուսերենով: Բնօրինակը պահվում է Անկախ Պետությունների Համագործակցության գործադիր կոմիտեում, որը սույն կոնվենցիան ստորագրած յուրաքանչյուր պետություն կուղարկի դրա հաստատված պատճենը:

Ադրբեջանի Հանրապետության կողմից՝

_____

Հայաստանի Հանրապետության կողմից՝

[ստորագրություն]

Ռուսաստանի Դաշնության կողմից՝

[ստորագրություն]

Տաջիկստանի Հանրապետության կողմից՝

[ստորագրություն]

Բելառուսի Հանրապետության կողմից՝

[ստորագրություն]

Ղազախստանի Հանրապետության կողմից՝

[ստորագրություն]

Ղրղզստանի Հանրապետության կողմից՝

_____

Մոլդովայի Հանրապետության կողմից՝

_____

Թուրքմենստանի կողմից՝

Ուզբեկստանի Հանրապետության կողմից՝

[ստորագրություն]

Ուկրաինայի կողմից՝

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2018 թվականի սեպտեմբերի 28-ին ստորագրված «Խաղաղ նպատակներով տիեզերական տարածության հետազոտման և օգտագործման ոլորտում համագործակցության մասին» Անկախ Պետությունների Համագործակցության» կոնվենցիայի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն